

Կարեն Բոթոյանը խրախուսել է կոմունալ սպասարկում և բարեկարգում իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներին

04.09.2017

Մեպտեմբերի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունել է Գավառ և Սևան համայնքների կոմունալ սպասարկում և բարեկարգում իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներին, շնորհակալություն հայտնել նրանց, ոլորտում իրականացրած բարեխիղճ աշխատանքի համար և վերջիններիս խրախուսել Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրերով:

Շինարարի օրվա առթիվ՝ ոլորտում ունեցած ավանդի համար, մարզի ղեկավարը շնորհակալագիր է հանձնել նաև «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Նորիկ Սիմոնյանին:

Իր խոսքում Կարեն Բոթոյանը նշել է, որ հատուկ ուշադրություն է դարձնում մարզում աղբահանության, սանիտարական մաքրման և տարածքների բարեկարգման աշխատանքներին և այդ ուղղությամբ օրինակելի համայնքների թվում առանձնացրել է Գավառ և Սևան քաղաքները: Գեղարքունիքի մարզպետը միաժամանակ հույս է հայտնել, որ մոտ ապագայում հնարավոր կլինի ամբողջ մարզում աղբահանության և բարեկարգման առումով նկատելի արդյունք արձանագրել: Հանդիպման ընթացքում մարզպետ Կարեն Բոթոյանը մասնագետներից հետաքրքրվել է ոլորտում առկա խնդիրներով: